

**ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ**

**(Առաջին աշխատաժողով,
Երևան 2022 թ. դեկտեմբերի 22)**

Ակնարկ գիտաժողովի մասին

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում 2022 թվականի դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ «Իրանական մշակութային ժառանգությունը Հարավային Կովկասում» վերտառությամբ միջազգային աշխատաժողով: Ըստ էության, Արևելագիտության ինստիտուտին կրկին հաջողվեց մեկ հարկի տակ հավաքել ՀՀ ԳԱԱ արվեստի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտնականներին և ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոսներին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն պ.գ.թ. Ռ.Ղազարյանը բացման խոսքում խիստ կարևորեց նման միջոցառումները, որոնք նոր լույս են սփռում տարածաշրջանում ընթացող բարդ աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Ադրբեջանը փորձում է հաճախ յուրացնել մշակութային հուշարձաններ, կոթողներ, որոնք իրեն չեն պատկանել, և այսպիսով փորձում է իրեն վերագրել պատմությունը, որը բնավ իրենը չէ: ՀՀ-ում ԻԻՀ նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. Աբբաս Բադախշան Զոհուրին իր խոսքում նշեց, որ տևական ժամանակ է, որ ականատեսն ենք լինում տարածաշրջանի ժողովուրդների պատմական փաստերի խեղաթյուրման, մշակութային ժառանգության ոչնչացման փորձերին: Շարունակելով խոսքը դեսպանը նշեց նաև, որ ուրիշների պատմության չիմացությունն ու ինքնահավանությունը նշված կործանարար գործողությունների ամենակարևոր սկզբնաղբյուրներից են:

Ելույթով հաջորդիվ հանդես եկավ ԻԻՀ 9-րդ և 10-րդ գումարման մեջլիսի պատգամավոր Կարեն Խանլարյանը, ով կարևորելով մշակութային ճանաչողությունը՝ նշեց, որ դա մեր երկու երկրների հարաբերությունների հիմքն է

հանդիսանում: Միևնույն ժամանակ փաստեց, որ խարխլված անվտանգության համակարգում դժվար է խորացնել մշակութային կապերը: Խանլարյանը հիշեցրեց ունկնդիրներին ԻԻՀ արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլահյանի խոսքը առ այն, որ անվտանգությունը անհրաժեշտ է բոլորին, այլ ոչ թե ընտրյալ մի խմբին կամ պետությանը. սա կարևոր ուղերձ էր տարածաշրջանի անվտանգությանը սպառնացող երկրին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Գոհար Իսկանդարյանը, ով նիստավարն էր, նշեց, որ այս աշխատաժողովով, ըստ էության, ամփոփվում է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների 31-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, որի մեկնարկը տրվել էր սույն թվականի փետրվարի 9-ին: Ամբողջ տարվա ընթացքում բազմաթիվ գիտաժողովներ ու աշխատաժողովներ են տեղի ունեցել Հայաստան-Իրան հարաբերությունների վերաբերյալ, ինչը ցույց է տալիս, որ Հայաստանում խիստ կարևորվում են բազմադարյա այդ հարաբերությունները:

Առաջինը գիտական զեկույցով հանդես եկավ ԻԻՀ մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարի խորհրդական Մորթեզա Ռեզվանֆարը «Պարսկական արձանագրությունները Հարավային Կովկասում» թեմայով, որտեղ նա մանրամասն ներկայացրեց իր հետազոտության արդյունքները, որ իրականացրել էր Երևանում, Բջնիում, Նախիջևանում, Ռուսաստանում, Միջինասիական երկրներում: Հաջորդը ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը «ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը և պարսկական արվեստի ուսումնասիրությունը» թեմայով, որտեղ նա ամփոփ ներկայացրեց այս տարիներին Արվեստի ինստիտուտում

իրենց թեկնածուական աշխատանքները պաշտպանած իրանցիների գործերը: Նշվեց, որ, ըստ էության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը նպաստում է իհՀ արվեստագիտական դպրոցի զարգացմանը: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Քրիստինե Կոստիկյանը ելույթ ունեցավ «Հայ-իրանական պատմամշակութային կապերը ըստ Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի» թեմայով, որտեղ ներկայացվեցին նրա կողմից Մատենադարանի արխիվներում պահպանված և մեծ կարևորություն ունեցող մի շարք ձեռագրեր, որոնք նոր լույս են սփռում երկկողմ դարավոր բարեկամության վրա:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Արսեն Հարությունյանը խոսեց «Շինարարական վերելքը ուշ միջնադարյան Երևանում՝ ըստ գրավոր աղբյուրների» թեմայով, որի շրջանակներում փաստեց, որ հատկապես Շահ Աբբասի կառավարման շրջանում էր Երևանում զարկ տրվել շինարարությանը, եկեղեցաշինությանը: Հաջորդիվ զեկույցով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող Արտյոմ Տոնոյանը, ում զեկույցը վերնագրված էր «Կովկասյան պարսկերենը՝ որպես Ադրբեջանում իրանական վտանգված էթնոմշակութային ժառանգության մաս»: Բանախոսը ուշագրավ փաստ արձանագրեց, ըստ որի՝ Ադրբեջանի այն տարածքներում, որտեղ իսպառ ոչնչացվել է հայկական խոսքը, որպես կանոն հաջորդը վտանգվում է նաև Կովկասյան պարսկերենը: Ըստ հետազոտողի՝ անգամ միջազգային հայտնի կազմակերպություններն ու գիտնականները չեն կարողանում Ադրբեջանում իրականացնել դաշտային աշխատանք և պահպանել այդ վտանգված լեզուները: Մարտիրոս Սարյանի տուն-

թանգարանի տնօրեն Ռուզան Սարյանը «Մարտիրոս Սարյանը և Պարսկաստանը» զեկույցում նշեց, որ Պարսկաստանը անջնջելի հետք է թողել անվանի նկարչի վրա: Ճանապարհորդությունից հետո ծնվել են այնպիսի կտավներ, ինչպիսիք են «Պարսկաստան», «Պարսկական նատյուրմորտ», «Դեմավենդ», «Թեհրանի շուկա» և այլն: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Անուշ Տեր-Մինասյանի զեկույցման թեման էր «Պարսկական ճարտարապետության գոհարներից մեկը՝ Երևանում».

խոսքը Կապույտ մզկիթի մասին է, որն ըստ բանախոսի՝ ոչ միայն Հայաստանի, այլ նաև ողջ Կովկասում եղած իրանական ամենաշքեղ մզկիթն է: Վերջինս, ԽՍՀՄ տարիներին պահպանվել էր հայ մտավորականների ջանքերով: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Տիգրան Միքայելյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության պարսկալեզու վիմագիր ժառանգությունը», որտեղ կարևորվեցին հատկապես Բջնիի 1175 թվականի արձանագրությունը, Օրբելյանների իջևանատան վրա արաբական ու պարսկական համակցված արձանագրությունների առկայությունը: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Աստղիկ Բաբաջանյանը ելույթ ունեցավ «Իրանական խեցեղենը հայ-իրանական առևտրամշակութային հարաբերությունների ցուցիչ» թեմայով, որտեղ վիզուալ ցուցադրվեց այն խեցեղենը, որը պեղումների արդյուքնում հայտնաբերվել է և նոր լույս սփռել հայ-իրանական առևտրական հարաբերությունների վրա:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ավետիս Գրիգորյանը ներկայացրեց «Երևանի ջրամատակարարման համակարգը պարսկական տիրապետության շրջանում» թեման, որտեղ

ներկայացրեց պարսկական զարգացած ջրամատակարարման համակարգերը: Այդ համակարգերը եղել են նաև Հայաստանի տարածքում և դարերով օգտագործվել ոռոգման նպատակով, սակայն ԽՍՀՄ տարիներին դրանք փաստացի դուրս մնացին օգտագործումից:

Վերջինը ելույթով հանդես եկավ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս Ահարոն Վարդանյանը՝ «Արցախի բարբառում նոր իրանական որոշ փոխառությունների շուրջ» թեմայով, որտեղ լեզվաբանական առումով ներկայացրեց այն փոխառությունները՝ պարսկական բառերն ու բառարմատները, որոնք մինչ օրս կիրառվում է Արցախի բարբառներում:

Բոլոր զեկուցումների վերջում տեղի ունեցան հարց ու պատասխան և քննարկումներ: Բանախոսներին առաջարկվել է սեղմ ժամանակահատվածում ելույթները դարձնել գիտական հոդվածներ և տրամադրել Իրանի բաժնին, արդյուքնում միայն երեք գիտաշխատող ներկայացրեց ամբողջական հոդված, որոնք տեղադրված են ստորև: